ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 215-Ա/3 «05» Հոկտեմբեր 2024թ.

«ՄԱՖ ՓՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով այն, որ 25.07.2024թ. կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-24/51 ծածկագրով ապրանքների (խոհանոցային կահույք) գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն «Մաֆ փրոդակշն» ՍՊԸ-ի կողմից պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո (26.07.2024թ) մինչև 20-րդ օրացուցային օրը ներառյալ (15.08.2024թ) չեն մատակարարվել Պայմանագրի 1-16-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները, ինչի արդյունքում առաջնորդվելով Պայմանագրի 2.1.7 կետով և 2.1.7.1 կետի բ) ենթակետով նախարարությունը 04.11.2024թ. միակողմանի լուծել է «Մաֆ փրոդակշն» ՍՊԸ-ի հետ կնքված Պայմանագիրը 1-16-րդ չափաբաժինների մասով և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Մաֆ փրոդակշն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02271945, հասցեն՝ ք. Երևան, Ներքին Շենգավիթ 9-րդ փ. 5/1) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

11/5/2024

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 **ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ**